

1.2.2. *Գյուղատնտեսություն*

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2002թ. հունվար-փետրվարին, փաստացի գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 19,2 մլրդ. դրամ, որը 2001թ. մակարդակը գերազանցել է 4,5%-ով, 2002թ. փետրվարի համախառն արտադրանքը կազմել է հունվարի 79,1%-ը (համադրելի գներով):

**Անասնապահական մթերքի արտադրությունը հանրապետությունում,
մարզերի կտրվածքով, 2002թ. մարտի 1-ի դրությամբ (հաշվարկային տվյալներով)**

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով)*, հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2002թ.	2002թ. % 2001թ. նկատմամբ	2002թ.	2002թ. % 2001թ. նկատմամբ	2002թ.	2002թ. % 2001թ. նկատմամբ
Արագածոտն	1,1	100,0	3,3	97,1	2,1	100,0
Արարատ	0,9	128,6	2,3	121,0	2,7	100,0
Արմավիր	0,7	100,0	2,0	105,3	2,5	75,8
Գեղարքունիք	1,7	106,2	5,4	112,5	2,6	92,9
Լոռի	1,0	83,3	3,3	97,1	1,5	100,0
Կոտայք	1,2	133,3	2,9	111,5	29,0	117,9
Շիրակ	1,4	107,7	4,4	115,8	2,7	103,8
Սյունիք	0,8	100,0	2,5	100,0	1,3	108,3
Վայոց ձոր	0,4	80,0	1,1	84,6	0,9	112,5
Տավուշ	0,8	100,0	2,1	100,0	2,0	100,0
ք. Երևան	0,2	200,0	0,1	50,0	6,4	125,5
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐ	10,2	107,4	29,4	105,4	53,7	110,3

Բերված տվյալները վկայում են, որ գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի հաշվարկային տվյալներով, 2002թ. փետրվարին իրացվել է 10,2 հազ. տոննա (կենդանի քաշով) անասուն և թռչուն, ինչը գերազանցել է 2001թ. ցուցանիշը 0,7 հազ. տոննայով կամ 7,4%-ով, կաթի արտադրությունը 1,5 հազ. տոննայով կամ 5,4%-ով, ձվինը՝ 5,0 մլն. հատով կամ 10,3%-ով:

* Ներառյալ ներքին սպառումը: